

2014թ-ին իրականացված այցերի եւ Լոռու մարզպետարանում կայացած հանդիպումների վերաբերյալ



Դեկտեմբերի 1-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանն ընդունեց ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Չրիսթեային, որին ուղեկցում էր ՀՀ-ում Չեխիայի հանրապետության փոխդեսպան Աննա Շագինյանովան: Հեթական այցի նպատակն էր Լոռու մարզում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներկայացում, դրանց նախնական արդյունքների ու համագործակցային հետագա պլանների մասին քննարկում:



Նոյեմբերի 26-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանն իր աշխատասենյակում հյուրընկալեց ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ներկայացուցիչներին և փորձագետներին: Հանդիպմանը նպատակն էր տեղեկացնելու ՀՀ կառավարության և ԱՄՆ միջազգային գործակալության գործընկերությամբ ու աջակցությամբ նախատեսվող խոշոր ծրագրի իրականացումը, որոնք կվերաբերվեն երեխաների՝ ընտանիքներում ապրելու իրավունքի վերականգնմանը, երեխաներին խնամքի հաստատություններից դուրս բերելուն և նոր մուտքերը կանխելու խնդիրներին՝ կանխարգելման բաղադրիչով:



Նոյեմբերի 27-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանն ընդունեց Եվրահանձնաժողովի Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներ, փորձագետներ Ժակլին Դելավուին և Էլեն Բապիրյանին: Հանդիպմանը նպատակը Եվրամիության հանձնարարությամբ Հայաստանում սցենարային ծառայություններ իրականացնող կառույցների գործունեության ուսումնասիրությունն է:



Նոյեմբերի 19-ին Լոռու մարզպետն ընդունեց Հայաստանի մանուկներ (COAF) հիմնադրամ բարեգործական կազմակերպության ներկայացուցիչներին: Հանդիպման նպատակն էր ներկայացնելու հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը, որոնք ուղղված են հիմնականում փոքրաթիվ բնակչություն ունեցող ՀՀ քաղաքային և գյուղական համայնքներում երեխայակենտրոն ծրագրերի ներդրման միջոցով բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը, ապահովել առողջ, կրթված, սցենարային պատասխանատու և տնտեսապես կենսունակ հանրություն:



Նոյեմբերի 3-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էին Ֆրանսիայի Ռիոն Ալպ շրջանի ներկայացուցիչները՝ Ռիոն Ալպի ռեգիոնալ խորհրդական, Հայաստան-Ֆրանսիա հանձնախմբի նախագահ Էդուարդ Սիմոնյանի և նրա ֆրանսիացի գործընկերներ՝ Ռիոն Ալպի հայաստանյան ներկայացուցիչ Աննա Ֆիորինին, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի և գիտության հարցերով կցորդ Ալիս Լենան, Ֆրանսիայի ֆինանսների նախարարության ներկայացուցիչ Իվ Դիլոնը, քաղաքապետի ղեկավարամենտի ներկայացուցիչ Բեռնար Չուառոն, G2IA ներկայացուցիչ Մատն Ռոմին: Մարզպետի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Լոռու մարզում իրականացվող ծրագրերի ընթացքը և հետագա համագործակցության հետ կապված անելիքներ:



Հոկտեմբերի 8-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանն ընդունեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուլթիկկի գլխավորած պատվիրակությանը: Այցի նպատակը ճանաչողական էր՝ դատական համակարգի բարեփոխումների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության ու ընտանեկան բռնությունների դեմ պայքարի ուղղությամբ մարզերում տարվող գործընթացներով:



Մեպտեմբերի 18-ին «Մելվ դը չիլդրեն» («Փրկենք երեխաներին») կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության անդամները հանդիպում ունեցան մարզպետ Ա.Նալբանդյանի հետ: Հանդիպման նպատակն էր 2011թ. կազմակերպության նախաձեռնությամբ մեկնարկած «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության ու կրթության» ծրագրի 2-րդ փուլում Լոռու մարզի 3 համայնքների ընդգրկումը: Ծրագրի նպատակն էր որոշակի ֆինանսական ու կուրսական միջոցների ներդրմամբ մարզերի առավելագույն կարիքավոր համայնքներում խթանելու երեխաների կրթության և ուսակությունների զարգացումը:



Հուլիսի 7-ին Լոռու մարզպետարանում տեղի ունեցավ հանդիպում Եվրամիության ներկայացուցիչների եւ մարզպետարանի աշխատակազմի հետ: Հանդիպման նպատակն էր ԵՄ-ան ի դեմս ECORYS կազմակերպության տեխնիկական աջակցության թիմի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ իրականացվող «Տարածաշրջանային կարողությունների կառուցման» ծրագրի շրջանակներում իրականացված մի շարք աշխատանքների լուսաբանումը եւ հետագա համատեղ աշխատանքների ներկայացումը: [\(Մանրամասնություններ...\)](#)



Հունիսի 5-ին Նոր-Պա-դը-Կալե դեպարտամենտի պատվիրակության ներկայացուցիչներ՝ «Մանուկների տուն» ասոցացիայի գլխավոր տնօրեն Դոմինիկ Դեմորի, Բապոմ քաղաքի երեխաների խնամքի կենտրոնի տնօրեն Դիոյե Փայենի այցելեցին Լոռու մարզպետին: [\(Մանրամասնությունները...\)](#)



Հունիսի 5-ին հերթական անգամ Լոռու մարզպետը հյուրընկալեց ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորության համատեղ դեսպան Քեթրին Ջեյն Լիչին: Այցի նպատակն էր ծանոթանալ առաջիկա տարիներին մարզում իրականացվելիք ծրագրերին ու հատկապես մարզի զարգացման համար գերակա ուղղություններ համարվող հանքարդյունաբերության, գյուղատնտեսության և տուրիզմի բնագավառներում կատարվող ձեռնարկումներին:



Մայիսի 21-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը հյուրընկալեց «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» գլխավոր ներկայացուցիչ Կարլ Հոֆստրային և Հայաստանյան ներկայացուցչության ՏԻՄ և քաղաքացիական հասարակության աջակցության ծրագրի համայնքային զարգացման ծրագրերի ավագ ղեկավար Հայաստան Ստեփանյանին:




Ֆրանսիայի ՊԱԿԱ շրջանից չորս ընտանիք՝ ՊԱԿԱ-ում Լոռու մարզպետի ներկայացուցիչ Օհան Հեքիմյանը, Էքս-ան-Պրովանս համալսարանի պրոֆեսոր, մաթեմատիկոս Մերժ Նագայանը, գործարար Ժորժ Իսրայելյանը և իրավաբան Ժան Մարկ Ֆայելը՝ տիկնանց հետ, տուրիստական այցով մայիսի 16-ին Լոռու մարզում էին: Նրանք հանդիպեցին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի հետ՝ ներկայացնելով իրենց նախաձեռնությամբ Լոռու մարզում առաջիկայում իրականացվելիք ծրագրերը:



Մայիսի 6-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի հյուրն էին «Ռոսհամագործակցության» հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Մարկ Գալինինը, ղեկավարի տեղակալ, ՀՀ-ում ՌԴ դեսպանատան առաջին քարտուղար Իգոր Կուստովը և կազմակերպության ներկայացուցիչ Մարիետա Սահակյանը: Ներկայացնելով այցի նպատակը, Մ. Գալինինը տեղեկացրեց, որ «Ռոսհամագործակցությունը» համատեքստ (կոնցեպցիա) է մշակում ՌԴ և Հայաստանի մարզերի միջև համագործակցությունն առավել արդյունավետ և փոխշահավետ դարձնելու համար: Այդ նպատակով նախատեսվում է կկրել միջոցառումներ համագործակցության համաձայնագրեր: Համաձայնագրով նախատեսվում է պայմանագրի կնքում Լոռու մարզպետի և «Ռոսհամագործակցության» հայաստանյան ներկայացուցչության ղեկավարի միջև, որի արդյունքում փոխշահավետ գործակցություն կծավալվի Լոռու մարզի և ՌԴ որևէ մարզի միջև:



Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը և Լոռու մարզը սերտ բարեկամական հարաբերություններ են պահպանում: Մարզերի մի քանի համայնքներ, այդ թվում՝ Վանաձորն ու Բաթումին նույնպես համագործակցում են, համատեղ ծրագրեր իրականացնում: Աջարիայի հայ համայնքի ու նրա «Աղբյուր» պարբերաթերթի 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում Վանաձորի քաղաքապետարանի հրավերով ապրիլի 10-ին Լոռու մարզկենտրոնում էր բաթումահայերի պատվիրակությունը՝ Գրիգորի Վարդանյանի գլխավորությամբ, նպատակը՝ Բաթումիի հայ համայնքի և Վանաձորի ֆուտբոլային թիմերի միջև ընկերական ֆուտբոլային հանդիպման անցկացումն էր, ինչպես նաև այցելություն մշակութային օջախներ: [\(Մանրամասնությունները ...\)](#)



Ապրիլի 10-ին Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանն ընդունեց ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Այիմդու Բոգժիգիտովի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման հիմնական նպատակը բարեկամական կապերի հաստատումն է մարզի հետ, ծանոթանալը Լոռու մարզի տնտեսական պոտենցիալին՝ առաջիկայում փոխհամագործակցության հնարավոր ծրագրեր իրագործելու նպատակով:



Ֆրանսիայի Պրովանս Ալպ կոտ Դ'Ալբյուր (ՊԱԿԱ) ռեզիոնալ խորհրդի և Լոռու մարզպետարանի միջև 2012թ ղեկուններին կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում, ՊԱԿԱ-ի անասնաբուժության ռեզիոնալ տան հրավերով ոչխարաբուժության ոլորտի ուսումնասիրության նպատակով մարտին կայացավ Լոռու մարզի պատվիրակության հերթական այց ՊԱԿԱ ռեզիոն: Պատվիրակության անդամներն այցելել են մի շարք ոչխարաբուժական ֆերմաներ, ծանոթացել ժամանակակից տեխնոլոգիաներով և մեթոդներով իրականացվող աշխատանքներին:



Մարտի 5-ին Լոռու մարզպետարանում տեղի ունեցավ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրագրեկման սեմինարը, որին մասնակցում էին Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի» և Եվրամիության, հասարակական կազմակերպությունների և ՋԱՄ-ների ներկայացուցիչներ: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հկ-ի կողմից՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հկ-ի հետ համագործակցությամբ:



2014թ-ի Փետրվարի 27-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր Հայաստանում Բրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Լորին գերագնացություն Մուհամմադ Ռեյխին, դեսպանության առևտրի կցորդ Համայակ Ավետիսյանի ուղեկցությամբ: Լոռու մարզպետարանում նրանց հյուրընկալեց մարզպետ Արթուր Նալբանդյանը: Դեսպանի այցը ճանաչողական բնույթ էր կրում՝ ծանոթանալ Լոռու մարզի տնտեսական պոտենցիալին, առաջիկայում փոխհամագործակցության հնարավոր ծրագրեր իրագործելու նպատակով:

